ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 դեկտեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

172
(2838)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉՊԵՍ ԿԾԱԽՍԵՆ ԲՅՈՒՋԵՆ

Երեւան քաղաքի բյուջեի նախագիծն արդեն ներկայացված է հանրային քննարկման Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում: Հանրային քննարկման ժամկետը մինչեւ դեկտեմբերի 5-ն է, դրանից հետո նախագիծը քննարկվելու է Երեւանի ավագանիում դեկտեմբերի 26-ին կայանալիք նիստում: Նախագիծը կայքում դիտվել է 255 անգամ: Ներկայացնենք փոքրիկ մասեր, թե ինչպես է պատրաստվում Ավինյանի ղեկավարած կառույցը ծախսել դեֆիցիտ ունեցող բյուջեն: Օրինակ՝ աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների համար նախատեսվել է 26 մլն դրամ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համայնքային ծառայողների վերապատրաստման եւ նեղ մասնագիտական ու կոմպետենցիաների վերապատրաստման համար աշխատակիցների մասնակցելու գործընթացը ապահովելու համար: Հարցն այն է, որ մասնագիտական զարգացման կարիք կա ամբողջ քաղաքապետարանում: Հետո անհասկանալի է այն փաստը, որ քաղաքապետարանն ավելի շատ գումար հատկացրել է գրասենյակային նյութերին եւ հագուստներին, քան վերը նշված մասնագիտական զարգացմանը: «Գրասենյակային նյութեր եւ հագուստ» հոդվածով ծախսերը ծրագրվել են 69 մլն դրամ, ինչը ավելի է 2023 թվականի հաստատված ցուցանիշից 7 մլն դրամով. հաշվարկվել են՝ հաշվի առնելով գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը: Հավելենք նաեւ, որ հազիվհազ ընտրված ֆրակցիայի բյուջեում, ինչպես իրենց դեպքում հաճախ է լինում, ահռելի գումար է հատկացված կենցաղային եւ հանրային սննդին: «Կենցաղային եւ հանրային սննդի ծառայություններ» գծով նախատեսվել է 33 մլն դրամ՝ 2023 թվականի 30 մլն դրամի դիմաց. ավելացումը հիմնականում պայմանավորված է գնաճով եւ նախատեսվում է տնտեսական ապրանքների ձեռք բերման նպատակով: Բյուջեի քննարկումներից հետո սպասենք եւ տեսնենք, թե նման ավել ծախսերը որ ընկերություններից են կատարվելու, եւ որ իշխանականն է հարստանալու:

Դեկտեմբերի 4-ին ԱԺ-ում կքննարկվի «ՀայաՔվե»-ի քաղաքացիական օրենսդրական նախաձեռնությունը: Պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովը, ըստ ամենայնի, բացասական եզրակացություն կտա օրինագծին, եւ այն նույնիսկ չի ընդգրկվի ԱԺ լիագումար նիստերի օրակարգում: Զարմանալի «զուգադիպությամբ» նույն օրերին՝ դեկտեմբերի 5-ին եւ 8-ին, տեղի են ունենալու նաեւ «ՀայաՔվե»-ի համակարգող Ավետիք Չալաբյանի դեմ արդեն մեկուկես տարի ձգվող քրեական գործի դատաքննության ամփոփիչ լսումները, եւ դատավոր Մնացական Մարտիրոսյանը կարդալու է դատավճիռը: Ամիսներ շարունակ կալանավայրում անցկացրած Ավետիք Չալաբյանի դեմ այս քրեական գործը, ինչպես հետո պիտի պարզվեր, ամբողջապես շինծու մեղադրանքով էր՝ իբր հավաքի մասնակիցներին նյութապես շահագրգռելու հիմքով: Պարզապես, ինչպես տասնյակ այլ ընդդիմադիր գործիչների, Չալաբյանի դեպքում էլ իշխանությունը նրա քաղաքական ակտիվությունը փորձում է կասեցնել նրա դեմ քրեական հետապնդմամբ:

Դեռ 2018 թվականի հուլիսի 20-ին Նիկոլ Փաշինյանը հայտարարում էր, որ վարչապետի լիազորությունները նվազեցնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու մտադրություն է առկա: Դրանից հետո նրա քայլերը հակասում են հայտարարություններին: Բանն այն է, որ Փաշինյանին եւս մեկ լիազորություն կտրվի: Այսուհետ ԱԱԾ ծառայության տնօրենին եւ նրա տեղակալներին կնշանակի եւ կազատի ոչ թե նախագահը, այլ վարչապետը: Որպես հիմնավորում՝ նշվում է այն հանգամանքը, որ ծառայությունը ենթակա է հենց վարչապետին: Այսպիսով, Նիկոլ Փաշինյանին եւս մեկ լիազորություն կտրվի, իսկ նախկինում նույն Փաշինյանը բողոքում էր սուպերվարչապետությունից:

«Լավանդա-նորֆարմ» ՍՊԸ-ն, որը պատկանում է ԱԺ նախկին պատգամավոր, գործարար Արայիկ Հայրապետյանի ընտանիքին, ՊԵԿ-ի հետ ընկել է դատական քաշքշուկների մեջ: Մեզ հայտնի դարձավ, որ ցանկանում են 04.10.2023թ. արձանագրությունն անվավեր ճանաչել: Ըստ էության, Պետական եկամուտների կոմիտեն տուգանել է նախկին պատգամավորին պատկանող ընկերությանը, եւ նա, չհաշտվելով տուգանքի հետ, այն վիճարկում է դատարանում: Նկատենք, որ նախկին պատգամավորի շուրջ սա միակ պատմությունը չէ, որ պտտվում է: Այս տարվա նոյեմբերի 23-ին Քննչական կոմիտեից հայտնել էին, որ քննությամբ պարզվել է՝ ֆիզիկական անձ Ա. Հ.-ն, հանդիսանալով գույքերի իրական սեփականատեր, այլ անձի՝ Ն. Ա.-ի անվամբ իրականացրել է կառուցապատման եւ բնակարանների օտարման գործունեություն Երեւան քաղաքի Ազատության պողոտա 1/10, 1/31, 1/32, 1/34, 1/38, 1/40, 1/41, 1/42 հասցեներում գտնվող «Պրեմիում Հաուս» բազմաբնակարան շենքերի թաղամասում: Նախնական համաձայնությամբ հաշվարկներում խեղաթյուրված տվյալներ մտցնելու եւ հարկման օբյեկտները թաքցնելու միջոցով առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու նպատակով, բնակարանների օտարման գործարքների փոխարեն, նա կնքել է բաժնային սեփականության օտարման գործարքների պայմանագրեր, որի հետեւանքով պակաս է հաշվարկել եւ չի վճարել շուրջ 500.000.000 ՀՀ դրամի հարկ: Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշումներով Ա. Հ.-ն եւ Ն. Ա.-ն ձերբակալվել են: Նախաքննության ընթացքում ձեռնարկված մեծածավալ վարութային եւ քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված անհերքելի ապացույցների ճնշման ներքո վերջիններիս կողմից ներկայացվել է շուրջ 500մլն ՀՀ դրամի լրացուցիչ հարկային պարտավորությունների վերաբերյալ եկամտային հարկի տարեկան հաշվարկ, եւ պետական բյուջե է վերականգնվել շուրջ 250 մլն ՀՀ դրամ գումար: Նախաքննությունը շարունակվում է: Նշենք, որ «Պրեմիում Հաուս» թաղամասի կառուցապատողը հայտնի գործարար Լավանդայի Արայիկն է՝ Արայիկ Հայրապետյանը: Նա Արթուր Բաղդասարյանի ՕԵԿ-ի անդամ էր, իշխանափոխությունից հետո համարավետ տեղավորվել էր նոր իշխանության «սրտի օլիգարխների» շարքերում՝ ՔՊ-ի տանիքի տակ: Կարծես թե, իրավիճակ է փոխվել:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՈ՞Ւ ՆԻՍՏԸ ՉԻ ԿԱՅԱՑԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայի հետեւանքով Արցախից Հայաստան տեղափոխված պատգամավորները մտադիր են եղել այս շաբաթ ԱԺ արտահերթ նիստ հրավիրել: Մեր տեղեկություններով՝ Արցախի բոլոր խմբակցությունները նախնական տվել են նիստին մասնակցության իրենց համաձայնությունը, սակայն նիստը չի կայացել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արցախի ԱԺ պատգամավոր Մետաքսե Հակոբյանը նշեց, որ նիստը տեխնիկական պատճառներով չի կայացել, բայց առաջիկայում անպայման ԱԺ նիստը կկայանա:

-Տիկին Հակոբյան, այս շաբաթ մտադիր էիք Արցախի ԱԺ նսիտ հրավիրել. ինչո՞ւ նիստը չկայացավ, ո՞րն էր պատճառը:

-Նիստ, այո՛, պետք է լիներ, բայց մինչեւ նիստը հանձնաժողովի նիստ պետք է լիներ, ինչը տեխնիկական խնդիրների պատճառով չի կայացել, բայց այնպես չէ, որ ԱԺ նիստը չի կայանալու:

-Իսկ ե՞րբ կկայանա նիստը:

-Հավանաբար առաջիկայում:

-Տիկին Հակոբյան, մամուլը գրել էր, որ մինչեւ նիստը նախագահ Սամվել Շահրամանյանը հանդիպել է իշխող «Ազատ հայրենիք-ՔՄԴ» խմբակցության պատգամավորների հետ, խնդրել է միառժամանակ ոչինչ չձեռնարկել, նիստ չհրավիրել, մինչեւ ինքը որոշ հարցեր հստակեցնի: Իշխող ֆրակցիայի պատգամավորներն էլ այդ օրը չեն եկել նիստի , դրա համար էլ այն տապալվել է:

-Այդ հարցը ճիշտ կլինի ուղղել «Ազատ Հայրենիք ՔՄԴ» խմբակցության պատգամավորներին: Նախորդ շաբաթ Արցախի ԱԺ բոլոր խմբակցությունների պատգամավորներն են հանդիպել Սամվել Շահրամանյանի հետ Արցախի ներկայացուցչությունում, բայց տեղյակ չեմ՝ առանձին հանդիպում «Ազատ-Հայրենիք ՔՄԴ» խմբակցության պատգամավորների հետ եղել է, թե ոչ:

-Իսկ ի՞նչ հարցեր եք քննարկել նրա հետ:

-Հիմնականում մենք՝ պատգամավորներս ենք հարցեր ուղղել Շահրամանյանին, քնարկել ենք առաջիկա մեր անելիքները, Արցախի կառավարության անելիքների մասին հարցեր ենք քննարկել, ինչպես նաեւ բռնի տեղահանված մեր հայրենակիցների խնդիրների լուծման հետ կապված մի շարք հարցեր:

-Սամվել Շահրամանյանի հետ ԱԺ նիստ հրավիրելու վերաբերյալ խոսե՞լ եք, ի՞նչ դիրքորոշում է նա հայտնել այդ մասով:

-Այո՛, ԱԺ նիստի մասին էլ ենք խոսել, Սամվել Շահրամանյանն էլ մեզ հետ համակարծիք է եղել, որ պետք է նիստ հրավիրվի: Բոլորս էլ այն կարծիքին ենք, որ պետք է քայլեր ձեռնարկվեն, քանի որ Արցախի հարցը երբեք չի կարող մոռացության մատնվել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱԿՏԻՎԱՑԵԼ ԵՆ

ԿՈՐԱԾ ՔՊ-ԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ՆԻՍՏԵՐԸ

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը վերջին շրջանում հաճախակի կուսակցական հավաքներ է անում՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ:

Գրեթե շաբաթը երկու անգամ իշխանականները հավաքվում են եւ վարչապետի հետ քաղաքական եւ ներկուսակցական հարցեր քննարկում:

Երեքշաբթի օրերին տեղի են ունենում կուսակցության վարչության նիստերը, որը նեղ կազմով է եւ սովորաբար ավելի փակ ֆորմատով, իսկ հինգշաբթի օրերին արդեն Նիկոլ Փաշինյանը հանդիպում է կուսակցության նախաձեռնող խմբի հետ, որը, ի տարբերության վարչության նիստերի, ավելի լայն կազմով է:

Ուշագրավ է, որ վերջին շրջանում ակտիվացել են նաեւ ՔՊ կուսակցության այն անդամները, որոնք վաղուց քաղաքական տեսադաշտում չէին երեւացել եւ շատ պասիվ էին: Օրինակ՝ կուսակցության երեկվա նախաձեռնող խմբի նիստին մասնակցում էր ԱԺ նախկին պատգամավոր Արման Բոշյանը, որը երկար ժամանակ ակտիվ չէր քաղաքական դաշտում: Նա 2018թ. դեկտեմբերի 9-ին ԱԺ պատգամավոր է ընտրվել «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի համապետական ընտրական ցուցակով, հետո հայտարարեց մանդատը վայր դնելու մասին: Նույն թվականին, Փաշինյանի որոշմամբ, նշանակվել էր Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության պետի պաշտոնին, սակայն այստեղ էլ պաշտոնավարեց մեկ տարի:

Արման Բոշյանը նաեւ ՔՊ կուսակցության վարչության անդամ է եղել: ԱԺ նախկին պատգամավորը երկար ժամանակ է՝ որեւէ պաշտոն չի զբաղեցնում, պասիվ էր նաեւ քաղաքական դաշտում, բայց, փաստորեն, որոշել է նորից մասնակցել կուսակցական հավաքներին: Կուսակցության նախաձեռնող խմբի նիստերին մասնակցում էր նաեւ Էջմիածնի քաղաքապետ Դիանա Գադպարյանը, որը նույնպես ընդհատակ էր անցել: «Ժողովուրդ» օրաթերթն էլ վերջերս էր գրել, որ Էջմիածնում բարձիթողի վիճակ է, համայնքում շատ խնդիրներ կան՝ աղբի, համայնքապետարանի աշխատանքի, շինարարության հետ կապված, բայց քաղաքապետն անհետացել էր ու չէր զբաղվում այդ հարցերով:

Հիմա, փաստորեն, ՔՊ ընդհատակ անցած անդամներն ակտիվացել են:

ՆԻՍՏԵՐ ԿԳՈՒՄԱՐԵՆ

Հաջորդ շաբաթ ԱԺ մշտական հանձնաժողովները նիստեր կգումարեն: ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը նիստ կգումարի երկուշաբթի՝դեկտեմբերի 4-ին. այդ օրը հանձնաժողով կգնա նաեւ ԱԳ նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանը: Այդ օրը նիստ կգումարի նաեւ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը. օրակարգում լինելու է 4 հարց՝ Ջենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին եւ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծերը: Երկուշաբթի նիստ կգումարի նաեւ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, օրակարգում 3 հարց է լինելու: Այդ օրը հանձնաժողով կգնա ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արա Մկրտչյանը: Արդեն դեկտեմբերի 5-ից մեկնարկում է ԱԺ լիագումար նստաշրջանը, ԱԺ են գնալու Նիկոլ Փաշինյանը եւ նախարարները:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

Մի քանի շաբաթ առաջ հայտնի դարձավ, որ Վեդի խոշորացված համայնքում «Օրդ գրուպ» ընկերությունը նախատեսում է ցեմենտի գործարան կառուցել, որին դեմ էին արտահայտվում համայնքի հարյուրավոր բնակիչներ ու մասնագետներ: Վեդու համայնքապետարանում կազմակերպված լսումների մասնակիցները հայտարարում էին, որ մարզում արդեն իսկ երկու ցեմենտի գործարան կա, երրորդը ոչ միայն ավելորդ է, այլեւ խիստ վտանգավոր ու ռիսկային եւ կարող է բնապահպանական լրջագույն վնաս հասցնել համայնքին: Ներկաների համար նախ չափազանց տարօրինակ էր, որ համայնքի համար կարեւորագույն այս քննարկմանը չէր մասնակցում համայնքապետ Գարիկ Սարգսյանը. նրան փոխարինում էր գյուղվարչության պետը, ում լիազորությունների մեջ վստահաբար չէր մտնում նման քննարկման ժամանակ համայնքի անունից ներկայանալու պատասխանատվությունը: Էլ ավելի տարօրինակ էր, որ ոստիկանական աննախադեպ քանակի ուժերի ներկայության ու Գարիկ Սարգսյանի բացակայության պայմաններում անցկացված լսումներից օրեր անց Գարիկ Սարգսյանը դրական եզրակացություն է տվել խնդրահարույց գործարանի կառուցման նախագծին: Ստացվում է, որ համայնքապետը որեւէ կարեւորություն չի տվել բարցրաձայնված բազմաթիվ մտահոգություններին, որոնք վերաբերում էին ցեմենտի նոր գործարանի կառուցման վտանգավոր հետեւանքներին, ու, մեղմ ասած, թքած է ունեցել թե՛ համայնքի բնակիչների, թե՛ մասնագետների կողմից հնչեցված կարծիքների վրա: Տրամաբանական հարց է առաջանում, թե ինչու է Վեդիի համայնքապետ Գարիկ Սարգսյանը այդքան շահագրգռված խնդրահարույց գործարանի կառուցմամբ, որին դեմ են արտահայտվում համայնքի բնակիչներն ու մասնագետները: Բնականաբար, վերջինս ոչ մի հոդաբաշխ բացատրություն չի տալիս այս հարցին, սակայն մեծ երեւակայություն պետք չէ հասկանալու համար, թե ինչ շարժառիթներով է առաջնորդվում կոկորդիլոսների բուծման նկատմամբ մեծ սեր ունեցող Գարիկ Սարգսյանը, որը, քաջ գիտակցելով նոր կառուցվող գործարանի վտանգավոր հետեւանքները, միեւնույնն է, կանաչ լույս է վառել դրա կառուցման համար: Եւ ցավալի է, որ հերթական անգամ անփորձ ու բացառապես սեփական շահի մասին մտածող չինովնիկի պատճառով մեր պետությունն է փորձության ենթարկվելու ու վտանգավոր ռիսկերի առաջ կանգնելու:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿԱՅՑԵԼԻ ԴՈՒԲԱՅ

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը վերսկսել է իր ակտիվ գործուղումների շարքը: Այս անգամ նա 5 օր անընդմեջ բացակայելու է ՀՀ-ից:

Վարչապետի որոշումներից տեղեկանում ենք, որ Ավանեսյանը դեկտեմբերի 2-3 կմեկնի Դուբայ՝ մասնակցելու կլիմայի փոփոխության հետ կապված համաժողովի, իսկ այնուհետեւ միանգամից կգնա աֆրիկյան երկրներից Գանա: Այստեղ էլ դեկտեմբերի 5-7 կմասնակցի պատվաստանյութերի մասին համաժողովի:

Նշենք, որ Ավանեսյանի «վոյաժների» մի մասի ծախսերը հոգալու ենք մենք՝ հարկատուներս, քանի որ նա Դուբայում առողջապահության ոլորտի հետ կապ չունեցող՝ Կլիմայի փոփոխության համաժողովին մասնակցելու է բյուջեի հաշվին:

Ոլորտը ձախողած նախարարը, փաստորեն, շարունակում է ոչ միայն պաշտոնավարել, այլեւ ակտիվ ճամփորդել:

ԿԱՏԱՐԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կատարը շարունակում է Իսրայելի եւ պաղեստինյան «ՀԱՄԱՍ» խմբավորման միջեւ հրադադարը շարունակելու միջնորդական ջանքերը՝ չնայած Գազայի հատվածում ռազմական գործողությունների վերսկսմանը: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդում է The Washington Post պարբերականը:

Ըստ հրապարակման՝ աղբյուրները հայտնել են, որ Իսրայելը, հնարավոր է, նորից հրադադար հաստատի, եթե «ՀԱՄԱՍ»-ը պարտավորվի ավելի շատ պատանդների ազատ արձակել:

«Մենք հասել ենք գծի վերջին», - ասել է The Washington Post-ի աղբյուրներից մեկը՝ նշելով, որ «ՀԱՄԱՍ»-ն արդեն ազատ է արձակել բոլոր կամ գրեթե բոլոր այն պատանդներին, որոնց նախատեսում էր այս պահի դրությամբ ազատ արձակել:

Ավելի վաղ հայտնել էինք, որ Իսրայելը վերսկսել է ռազմական գործողությունները՝ «ՀԱՄԱՍ»-ին մեղադրելով հրադադարը խախտելու եւ Իսրայելի ուղղությամբ հրթիռ արձակելու մեջ:

Կատարի միջնորդական ջանքերի շնորհիվ ձեռք բերված հրադադարն ուժի մեջ էր մտել նոյեմբերի 24-ին եւ երկու անգամ երկարաձգվել էր: Այդ ընթացքում «ՀԱՄԱՍ»-ն Իսրայելին է վերադարձրել 105 պատանդի, իսկ Իսրայելն ազատ է արձակել 240 պաղեստինցի բանտարկյալի: Հրադադարը նաեւ թույլ էր տվել, որ Գազայի հատված մտնի հումանիտար օգնություն, այդ թվում՝ սնունդ, բժշկական պարագաներ, վառելիք:

ՀԵՐԹԵՐ

ՎԻԶԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԵՂԾԻՔՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Վիզա ստանալու հերթերը ու դրանից առաջացած անհարմարություններն արդեն երկար ժամանակ է, ինչ վաս իրավիճակի մեջ են գցում քաղաքացիներին: Շատ քաղաքացիներ, որոնք ցանկանում են ամենատարբեր նպատակներով մեկնել Հայաստանից, բախվում են վիզա ստանալու հերթերի ու մի շարք այլ խնդիրների հետ:

Ավելի կոնկրետ ու հասկանալի ասված՝ կատարվում է հետեւյալը. դեսպանատունը տրամադրում է շենգենյան վիզա ստանալու համար օրեր, որոնք ամրագրում են քաղաքացիները, սակայն լինում է եւ այնպես, որ մարդիկ ինչ-ինչ պատճառներով հրաժարվում են իրենց հերթից, օրինակ՝ մտափոխվել են, հիվանդ են կամ ցանկացած այլ պատճառով պարզապես ներկա լինել չեն կարող այդ օրը: Ստացվում է, որ այդ օրը մնում է ազատ: Հաշվի առնելով վիզա ստացողների եւ վիզայի համար դեսպանատան կողմից տրամադրվող օրերի քանակի չհամընկնելը՝ տեղի են ունենում մի շարք կեղծիքներ:

Մասնավորապես՝ անհատներ կամ հատուկ խմբեր օր ու գիշեր 24/7 ռեժիմով թարմացնում են ամրագրումների կայքը, որպեսզի ինչ-որ մեկի հերթը «առաջ գցեն» եւ դրանով իսկ գումար են աշխատում: Դրա համար պահանջում են անձնագրի տվյալներ, էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար եւ այլն, այսինքն՝ հնարավոր բոլոր անձնական տվյալները պահանջվում են վիզա ստացողից դեսպանատներում հերթ ստանալու համար, եւ ճարահատյալ քաղաքացին էլ հնարավորինս շուտ վիզա ստանալու համար տալիս է այդ ամենը անհայտ անձանց: Փաստացի այս երեւույթը հղի է բազմաթիվ վտանգներով:

«Հերթը առաջ գցողները» ունեն իրենց հատուկ խումբը, որով քաղաքացիները կապ են հաստատում եւ պայմանավորվում հետագա գործողությունների համար:

«Ժողովուրդ» օրաթերթը եւս տարբեր երկրների օրինակով փորձել է վիզա ստանալու «այդ մութ եղանակից օգտվել»:

Միայն մեկ ժամվա ընթացքում Ֆրանսիայի դեսպանատանը հունվարի վերջին հերթ ստանալու համար մեզ հետ կապվեցին շուրջ 7 հոգի: Գների սահմանը տատանվում էր 25000-30000 դրամի սահմաններում: Իսկ եթե ցանկանում ենք ավելի մոտ օր, օրինակ՝ դեկտեմբերին, այն կարժենա ավելի թանկ, քանի որ հավելյալ ռեսուրսներ է պահանջում:

Մեր զրուցակիցների խոսքից պարզ դարձավ նաեւ մեկ այլ բան. եթե, օրինակ, մի երկրի դեսպանատուն գերծանրաբեռնված է, կարող են ավելի հեշտ ու համեմատաբար ավելի նոսր հերթեր ունեցող դեսպանատուն ամրագրել վիզա ստանալու հերթ, ստանալ Շենգեն վիզա ու այցելել այնտեղ, որտեղ ուզում եմ, սակայն ցանկալի է՝ առաջինն այցելել եվրոպական այն երկիրը, որի դեսպանատուն դիմել են:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Ֆրանսիայի դեսպանատուն՝ հասկանալու, թե արդյոք իրենք վերահսկում են այս ամենը, ինչու օրերի քանակը հավուր պատշաճի չի տրամադրվում քաղաքացիներին: Մեզ պատասխանեցին, որ բանավոր ոչ մի հարցի պատասխանել չեն կարող, միայն նշեցին, որ օրեր տրամադրում են, պարզապես ծանրաբեռնվածությունը մեծ է:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՎԱՌԵՆ ԱՐՑԱԽՅԻ ՓՈՔՐԻԿՆԵՐԸ

Երեւանում ակտիվորեն ընթանում են ամանորյա զարդարանքների աշխատանքները: Պարբերաբար քաղաքում փողոցներ կամ փողոցի տարբեր հատվածներ փակվում են ամանորյա լուսավորությունն ապահովելու համար: Նշենք, որ այդ լուսավորության համար համայնքային բյուջեից տրամադրվել է 202406000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Անցած տարի քաղաքի տոնական լույսերը միացվեց «Մանկական Եվրատեսիլ 2023-ի» բացման արարողությանը, որը ընթանում էր հենց Հանրապետության հրապարակում:

Իսկ այս անգամ ե՞րբ են վառվելու լույսերը. քաղաքապետարանն այս առումով լռում է, դեռեւս հստակ որոշում չկա:

«Ժողովուրդ»-ի աղբյուրները փոխանցում են, որ այս տարի հապարակում լույսերը վառելու են արցախցի փոքրիկները քաղաքապետ Տիգրան Ավինյանի հետ:

ԲԱՔՈՒՆ ՀԱՎԱՏՈՒՄ Է

Բաքուն հավատում է Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղ գոյակցության հնարավորությանը: Սկոպյեում ԵԱՀԿ նախարարական 30-րդ համաժողովի ժամանակ այս մասին հայտարարել է Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը:

«Չնայած ավերածություններին ու չսպիացած վերքերին՝ հենց Ադրբեջանն է նախաձեռնել Հայաստանի հետ միջպետական հարաբերությունների կարգավորման գործընթացը», - ասել է Բայրամովը՝ նշելով, թե այլ սուբյեկտների կողմից նախաձեռնվող աշխարհաքաղաքական ինտրիգների շարունակությունն անարդյունավետ է եւ միայն ծառայում է խաղաղ գործընթացի ձգձգմանը:

Նա նշել է, թե Բաքուն հստակ հանձնառու է խաղաղությանը, թեեւ գործընթացը ձգձգվում է:

«ՀԱՅԱՔՎԵՆ»՝ ԱԺ–ՈՒՄ

«ՀայաՔվե» քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության հեղինակած նախագիծը հաջորդ շաբաթ՝ երկուշաբթի, կքննարկվի Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում: Նախագիծը հանձնաժողովում ներկայացնելու է «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը:

«ՀայաՔվե» նախաձեռնության օրենքի նախագիծը փոփոխություններ է առաջարկում Քրեական օրենսգրքում, որով խիստ պատիժ է նախատեսում Լեռնային Ղարաբաղի ինքնորոշումից հրաժարվելու եւ Հայոց ցեղասպանության նշանակությունը նսեմացնելու համար: Երկուշաբթի օրը ԱԺ պետահիրավական հանձնաժողովը դրական կամ բացասական եզրակացություն պետք է տա:

Անկախ եզրակացությունից՝ նախագիծն ընդգրկվելու է Ազգային ժողովի լիագումար նիստերի օրակարգ:

ՊԱՐՔՎԵԼ Է

ՊԱՐՏԱՊԱՆԻ ԽՆԱՄԻՆ ՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ ֆինչական կոմիտեի Արմավիրի մարզային ֆինչական վարչությունում իրականացված ֆինչական եւ վարութային անհրաժեշտ գործողությունների արդյունքում պարզվել են ինֆնիրավչության, հոգեկան ներգործության, մարդուն առեւանգելու, ապօրինի կերպով ռազմամթերք ձեռք բերելու, պահելու, կրելու դեպքի հանգամանքները:

Քննությամբ հիմնավորվել է, որ Էջմիածին քաղաքի բնակիչ Ա.Ու.-ն Խաչփար գյուղի բնակչից գնել է «Վազ 21010» մակնիշի ավտոմեքենա, որի համար արժեքի մի մասը վճարել է, իսկ մյուս մասը՝ 300 000 դրամի չափով, մնացել է պարտք:

Արմավիրի մարզի Արշալույս գյուղի 32-ամյա բնակիչ Ա.Հ.-ն, տեղեկանալով, որ Ա.Ու.-ն գումարը չի տալիս, որոշել է իր ընկեր, Էջմիածին քաղաքի 34-ամյա բնակչի՝ Ա.Ա.-ի հետ խմբի կազմում Ա.Ու.-ից 300.000 դրամ պարտք գումարը վերադարձնել ստիպելու նպատակով վերջինիս հետ խնամիական կապերի մեջ գտնվող Ա.Չ.-ին առեւանգել:

Այդ նպատակով 2022թ. հունիսի 16-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, Ա.Հ.-ն եւ Ա.Ա.-ն, նախնական համաձայնությամբ, խաբեությամբ, վստահությունը չարաշահելու եղանակով Էջմիածին քաղաքի Չարենցի փողոցից գումարային հարցերը պարզաբանելու համար նստել են Ա.Չ.-ի կողմից վարվող «Վազ 2109» մակնիշի ավտոմեքենան: Ապա Ա.Հ.-ն, Ա?Չ?-ի կամքին հակառակ, կացնի ցուցադրմամբ վերջինիս դիմադրությունը ճնշելով, սպանության սպառնալիքներ տալով, ստիպել են ավտոմեքենան վարել Էջմիածին քաղաքի Չոբանքարա կոչվող տարածքում գտնվող առանձնատուն, վերցրել ավտոմեքենայի բանալիները եւ բջջային հեռախոսը, նրան զրկել փախուստի դիմելու հնարավորություններից: Դրանից հետո խնամու՝ Ա.Ու.-ի գտնվելու վայրը պարզելու նպատակով Ա.Ա.-ն ձեռքերով հարվածներ է հասցրել Ա.Չ.-ի մարմնի տարբեր մասերին:

Շարունակելով հանցավոր գործողությունները՝ Ա.Հ.-ն իր ընկեր Ա.Ա.-ի հետ Ա?Ու?-ին պարտքը վերադարձնել ստիպելու համար վերջինիս կողմից վերանորոգվող եւ նրա տան բակում կայանված՝ սեփականության իրավունքով այլ անձի պատկանող «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենան, առանց սեփականատիրոջ կամքը հաշվի առնելու, նրան տեղյակ պահելու, 2022թ? հունիսի 17-ին իրենց հայեցողությամբ ավտոքարշակով տեղափոխել են Արմավիրի մարզի Առատաշեն համայնք՝ կատարելով ինքնիրավչություն եւ ավտոմեքենայի սեփականատիրոջը պատճառելով գույքային վնաս:

Բացի այդ, Ա.Հ.-ն քննությամբ դեռեւս չպարզված ժամանակահատվածում եւ հանգամանքներում ապօրինի կերպով ձեռք է բերել եւ դեպքի օրն իր պայուսակում ապօրինի պահել է ռազմամթերք հանդիսացող, գործարանային արտադրության «Մ-75» տեսակի մարտական բեկորային նռնակ՝ իր պայթուցիչով, որը խուզարկությամբ հայտնաբերվել եւ առգրավվել է:

Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԼՔԵԼ ԵՆ ՁՈՐԱՄԱՍԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Գեւորգ Հակոբյանին, Մանուկ Մանուկյանին, Վահե Բաբայանին, Գոռ Ալեքսանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք հայտարարված ռազմական դրության պայմաններում 2020թ.-ի հոկտեմբերի 12-ին, ծառայության վայր ներկայանալու փոխարեն, զինվորական ծառայությունից ժամանակավորապես խուսափելու դիտավորությամբ մեկնել են բնակության վայր եւ մինչեւ 2020թ.-ի նոյեմբերի 18-ը առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության վայր չեն ներկայացել՝ ինքնակամ ծառայությունից բացակայելով 240 ժամից ավելի տեւողությամբ:

Գործով նախաքննության ավարտ է հայտարարվել:

ԿՌԻՎ՝ ԲԱՆՏՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Մհեր Կաղզվանցյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի կալանավոր, պատիժն ի կատար ածող նույն հիմնարկի բնականոն գործունեությունը խոչընդոտելու նպատակով Տիրիթ Քարհանյանի հետ աշխատակիցների հասցեին տվել են սեռական բնույթի հայհոյանքներ, քաշքշել են նրանց, ապա Մհեր Կաղզվանցյանը ձեռքին գտնվող սուր, ծակող-կտրող առարկայով հարձակվել է քրեակատարողական հիմնարկի ծառայող Ա. Ավետիքյանի վրա: Նա փորձել դրանով հարվածել նրան, վայր է գցել մահճակալի վրա, ինչի հետեւանքով Արամ Ավետիքյանը վայր ընկնելիս կառչել է նույն վայրում գտնվող Գեւորգ Թովմասյանի հագուստներից: Վերջինս ինքնցիայով վայր է ընկել Արամ Ավետիքյանի կրծքավանդակին, որի պատճառով նրա առողջությանը պատճառվել է առողջության միջին ծանրության վնաս: Երբ կրկին ցանկացել է նույն սուր, կտրող-ծակող առարկայով հարվածել Արամ Ավետիքյանին, այդ պահին Եղիշե Քոչինյանը միջամտել է, ու նշված սուր, կտրող-ծակող առարկան դիպել է նրան եւ պատճառել առողջության թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ՈՒՏՈԵՎՆ ՈՒ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԸ

Քրեական հեղինակություն Յուրի Ուտոեւին մեղադրանք է առաջադրվել: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ պատճառն այն է, որ նա հարձակվել է քաղաքացու վրա հանդիպելու իր հրավերն անտեսելու համար:

Մասնավորապես՝ 2022 թվականի հուլիսի 25-ի կեսօրին այցելել է Միքայել Սալիբեկյանին պատկանող, Երեւան քաղաքի Հ. Հակոբյան 2/50 հասցեում գործող հացաբուլկեղենի արտադրամաս, որտեղ նույն ընկերության աշխատակցին պատկանող հեռախոսով զանգահարելով Միքայել Սալիբեկյանին՝ առաջարկել է նույն օրը՝ ժամը 21:00-ի սահմաններում, հանդիպել Երեւան քաղաքի Կիեւյան 4 շենքի իրեն պատկանող նկուղային հատվածում՝ միաժամանակ ասելով, որ իր հետ սնունդ տանի:

Միքայել Սալիբեկյանը, հասկանալով, որ զանգահարողը Կիեւյանցի Յուռա մականունով Յուրի Ուտոեւն է, ժամը 21:00-ի սահմաններում գնացել է պայմանավորված վայրը: Շենքի նկուղային հատվածում Միքայել Սալիբեկյանը սպասել է, մինչեւ Յուրի Ուտոեւը ընթրի, որից հետո Յուրի Ոտոեւն իր զանգերին չպատասխանելու, հանդիպումից խուսափելու եւ իրեն արհամարելու համար ֆիզիկական ներգործություն է գործադրել Միքայել Սալիբեկյանի նկատմամբ, այն է՝ հարվածներ է հասցրել վերջինիս՝ պատճառելով գլխի, ձախ ուսահոդի, արմնկային հոդի, ձախ բազկի, նախաբազկի եւ ձախ սրունքի շրջանների քերծվածքների ձեւով առողջությանը թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԵՔԵՆԱՆ ԹԱԼԱՆԵԼ ԵՆ

Նոյեմբերի 28-ին խոշոր չափի գողության դեպք է տեղի ունեցել Տավուշի մարզում: Ժամը 12:30-ին ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Իջեւանի բաժին է ահազանգել Աչաջուր գյուղի բնակիչ՝ 42-ամյա Հրանտ Ղալթախչյանը եւ հայտնել, որ նոյեմբերի 27-ի ժամը 23:30-ից մինչեւ նոյեմբերի 28-ի ժամը 08:40-ն ընկած ժամանակահատվածում Աչաջուր գյուղում, օգտվելով իրեն պատկանող Audi A4 մակնիշի ավտոմեքենայի դռան բաց լինելու հանգամանքից, հափշտակել են այնտեղ եղած գումարը. հաղորդում է Shamshyan.com-ը:

Տեղում Հ. Ղալթախչյանը ոստիկաններին ու քննիչներին հայտնել է, որ ավտոմեքենայի սրահի պահոցից անհայտ անձը կամ անձինք գողացել են 1 մլն 320 հազար ՀՀ դրամ, 2450 ԱՄՆ դոլար եւ 120 հազար ՌԴ ռուբլի:

Դեպքի փաստով Տավուշի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ոստիկանությունը ձեռնարկում է անհրաժեշտ օպերատիվ հետախուզական միջոցառումներ՝ հանցագործությունը կատարած անձի կամ անձանց ինքնությունը պարզելու, նրանց եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

Կայքի տեղեկություններով՝ Հ. Ղալթախչյանը երկար տարիներ աշխատել է հայաստանյան հայտնի բանկերից մեկի Իջեւանի մասնաճյուղի կառավարիչ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 29-ից 30-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 60 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՁ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է

Փաստացի շուրջ 350 բնակիչ ունեցող Աղավնավանք գյուղը գտնվում է Դիլիջան քաղաքից 22 կմ հեռավորությամբ, այն հասարակական տրանսպորտով կապված է համայնքի կենտրոն Դիլիջան քաղաքի եւ Տավուշի մարզկենտրոն Իջեւանի հետ: Աղավնավանքում բնակվում են 1980-ական թվականների վերջին Ադրբեջանի տարբեր բնակավայրերից բռնագաղթած մեր հայրենակիցները: Աղավնավանք բնակավայրի վարչական ղեկավար Ալեքսանդր Հարությունյանը հայտնեց, որ գյուղում անշարժ գույքի գները հավասար են Դիլիջան քաղաքի անշարժ գույքի գներին, Աղավնավանքում 3-4 դատարկ տներ կան, որոնց տերերն այժմ այլ տեղերում են բնակվում: Արցախից վերջերս բռնագաղթած 7 ընտանիք հաստատվել է Աղավնավանքում, նրանց մի մասը՝ գյուղում վարձավճարով, մյուսներն առանց վարձի են ապրում: Արցախից բռնագաղթած ընտանիքների թվով 5 երեխաները ավելացրել են գյուղի միջնակարգ դպրոցի աշակերտների թիվը՝ այն հացնելով 43-ի: Բնակավայրի վարչական ղեկավարի վկայությամբ՝ Աղավնավանքի հիմնական խնդիրը խմելու ջուրն է, 60 ընտանիք օգտվում է գյուղում փորված խորքային հորերի ջրից: Այժմ իրականացվող, տարեվերջին ավարտվելիք սուբվենցիոն ծրագրով լուծվելու է գյուղի խմելու ջրի հիմնահարցը: Բնապահպանական մի կազմակերպություն էլ ոռոգման ջրագծի ծրագիր է իրականացնում: Ա. Հարությունյանի խոսքերով՝ նախատեսվում է գյուղի գրունտային ճանապարհների փոխարեն 2024 թվականին տուֆապատ ճանապարհներ կառուցել:

ԿՄՆԱ՞Ն ՏԱՎՈՒՇՈՒՄ

Տավուշի մարզպետարանից տեղեկացա, որ Արցախից բռնագաղթածներից Տավուշի մարզում բնակություն է հաստատել 2970 անձ (780 ընտանիք), որոնցից ներկայումս աշխատանք ունի ընդամենը 36-ը: Մարզպետարանից հայտնեցին նաեւ, որ Արցախից բռնագաղթածները մինչ այժմ Տավուշի մարզում սեփականության իրավունքով բնակարաններ չեն գնել: Տավուշում հիմնական աշխատանք եւ սեփական բնակարան չունեցող արցախցի բռնագաղթածներից քանի՞սը կբռնի արտագաղթի ճամփան:

ՏՈՆԱԾԱՌ՝ ՏԱՐԵՄՈՒՏԻՑ ԱՌԱՋ

Նոյեմբերի 30-ին Դիլիջան քաղաքի կենտրոնական խաչմերուկում՝ միջպետական ավտոճանապարհին, տոնածառ տեղադրվեց: Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանի համար էական չէ, որ մինչ տարեմուտ մեկ ամիս ժամանակ կա, որ Դիլիջանի քաղաքում եւ համայնքի 6 գյուղերում բազմաթիվ չլուծված հիմնախնդիրներ գոյություն ունեն, նրա համար կարեւորը միջպետական ավտոճանապարհի մեջտեղում վաղաժամ տեղադրված տոնածառն է, որին ոչ մի երեխա չի կարող մոտենալ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՅՏՆԻ Է

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՂ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ԴՊՐՈՑՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ կառավարության վերջին նիստում գործադիրը հավանության է արժանացրել «Մինչեւ 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրում ընդգրկված ուսհաստատությունների ցանկը եւ դրանց համար սահմանված շինարարական աշխատանքների՝ կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման համար միջամտության աստիճանի ընտրության չափորոշիչները: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ԿԳՄՄՆ-ից:

««ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագրով նախատեսվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, այդ թվում՝ սեյսմիկ անվտանգության ապահովում, փոքրաքանակ աշակերտական համակազմ ունեցող բնակավայրերում մոդուլային դպրոցական շենքերի կառուցում, ըստ անհրաժեշտության՝ հիմնանորոգման, վերակառուցման այլ աշխատանքներ: Մինչեւ 2030 թ. նման աշխատանքներ նախատեսվում է իրականացնել 400 դպրոցում (2026 թ. թիրախը՝ 300 դպրոց):

Դպրոցական շենքերի եւ կոմունալ ենթակառուցվածքների պատշաճ ապահովման նպատակով առաջիկա տարիներին նախատեսվում է վերակառուցման, հիմնանորոգման եւ կառուցման աշխատանքներ իրականացնել 300 դպրոցում, որի նպատակն է ապահովել որակյալ կրթական ծառայությունների հասանելիություն ՀՀ բոլոր մարզերում եւ Երեւանում:

Դպրոցական միջավայրին առնչվող մի շարք գործոնների կարգավորման շնորհիվ, որպես հետեւանք, կարձանագրվեն կրթական բարելավված արդյունքներ: Բնակավայրերը կունենան կրթական ժամանակակից շենքային պայմաններ՝ ապահովված համապատասխան լաբորատորիաներով, մարզադահլիճներով եւ այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներով: Կբարելավվի դպրոցական շենքերի եւ կոմունալ ենթակառուցվածքների ֆիզիկական վիճակը (դպրոցական գույք, մարզագույք, գրադարանային գույք, ՏՀՏ սարքավորումներ, լաբորատորիաներ):

Առաջնահերթություն է բոլոր դպրոցներում լաբորատոր ենթակառուցվածքների ստեղծումը, ինչը կարող է լավ նախադրյալ լինել բնագիտական ուղղությամբ կրթության որակի եւ արդյունավետության բարելավման համար հանրակրթության նոր չափորոշչով կարողունակությունները զարգացնելու վրա հիմնված կրթություն իրականացնելու նպատակով:

Գյուղական բնակավայրերի հաստատությունները կընդլայնեն իրենց նշանակությունը՝ գործելով իբրեւ համայնքային կենտրոն, ապահովելով բնակավայրի մշակութային, մարզական, ժամանցային միջավայրերն ու ենթակառուցվածքները: Կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության տեսանկյունից կգործեն կրթահամալիրներ, որտեղ, հանրակրթական ծրագրերից զատ, կարող են իրականացվել նաեւ նախադպրոցական, անհրաժեշտության դեպքում՝ արհեստագործական, լրացուցիչ կրթական ծրագրեր:

Կապահովվի նաեւ մարզադահլիճների եւ խաղահրապարակների առկայությունը, որոնք կհագեցվեն անհրաժեշտ գույքով:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԲԵՌՆԱՏԱՐՆԵՐԸ՝ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

«Վերին Լարս» անցակետում ավելի քան 3 200 բեռնատար սպասում է ռուս-վրացական սահմանով անցնելուն: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդում է Sputnik գործակալության վրացական ծառայությունը՝ վկայակոչելով Հյուսիսային Օսիայի ճանապարհային երթեւեկության կազմակերպման կենտրոնի հաղորդագրությունը:

Բեռնատարների անցումը Գուդաուրի-Կոբի հատվածով արգելված էր նոյեմբերի 26-ից մինչեւ 29-ը եղանակային պայմանների պատճառով, ինչի հետեւանքով էլ հերթ է գոյացել:

Դեկտեմբերի 1-ի առավոտյան ռուսական կողմից Վրաստան մուտք գործելու է սպասում, ընդհանուր առմամբ, 3 236 բեռնատար:

Կատարված մաքրման աշխատանքների շնորհիվ նոյեմբերի 29-ի երեկոյան հնարավոր է եղել վերականգնել կցորդիչով եւ կիսակցորդիչով փոխադրամիջոցների երթեւեկությունը:

Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարս ավտոմայրուղին՝ այսպես կոչված ռազմավարական ճանապարհը, ներկայում Վրաստանն ու Հայաստանը Ռուսաստանի հետ կապող միակ ցամաքային ճանապարհն է: Իսկ «Կազբեգի-Վերին Լարս» անցակետը Վրաստանի եւ Ռուսաստանի ցամաքային սահմանին ներկայում գործող միակ անցակետն է:

ԱՆՈՄԱԼ ՏԱՔ ԴԵԿՏԵՄԲԵՐ

Հայաստանում դեկտեմբեր ամսին սպասվում է տաք, բայց տեղումնառատ եղանակ: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին տեղեկացրել է Շրջակա միջավայրի նախարարության հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնի տնօրենի տեղակալ Գագիկ Սուրենյանը «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր էջում կատարած գրառման միջոցով:

Նշվում է, որ դեկտեմբերին օդի ամսական միջին ջերմաստիճանը կանխատեսվում է նորմայից բարձր 4-5 աստիճանով, տեղումների քանակը՝ նորմային մոտ:

«Սպասվում է անոմալ տաք եւ բավարար տեղումներով դեկտեմբեր»,- գրել է Գագիկ Սուրենյանը:

Միայն վառելիքի հանածո տեսակների օգտագործումից լիովին հրաժարվելը մարդկությանը թույլ կտա հասնել գլոբալ տաքացման զսպման ըստ Ցելսիուսի 1,5 աստիճանի մակարդակի վրա, որն ամրագրված է Փարիզի կլիմայի համաձայնագրով: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտարարել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշը՝ դիմելով Դուբայում ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության 28-րդ համաժողովի մասնակիցներին:

«Գիտությունը միանշանակ ասում է՝ 1,5 աստիճանի սահմանն իրական է, միայն եթե մենք, ի վերջո, դադարենք այրել ամբողջ հանածո վառելիքը, ոչ թե կրճատենք (դրա օգտագործումը), ոչ թե նվազեցնենք, այլ աստիճանաբար հրաժարվենք՝ հաշվի առնելով հստակ ժամանակային շրջանակները», - նրա խոսքերն է մեջբերում «ՏԱՍՍ»-ը:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԲՅՈՒՋԵՆ ՈՒ ԱՆՄԻՏ ԾԱԽՍԵՐԸ

2023 թվականի դեկտեմբերի 26-ին Երեւան քաղաքի ավագանու հերթական նիստում քննարկվելու է 2024 թվականի Երեւան քաղաքի բյուջեի նախագիծը:

Գաղտնիք չէ, որ քաղաքական իշխանությունները հազիվհազ ձայն մուրալով եկան եւ դարձան քաղաքագլուխ, իսկ այժմ ունեն լուրջ խնդիրներ՝ կապված քաղաքի բյուջեի հետ:

Ըստ ներկայացված նախագծի՝ Երեւան քաղաքի 2024 թվականի բյուջեն չի բավականացնում քաղաքի կարիքները հոգալու համար: Բյուջեի նախագծով կանխատեսվում է եկամուտների գծով 96 մլրդ 654 մլն դրամ, ծախսերի գծով՝96 մլրդ 932 մլն դրամ, դեֆիցիտը կկազմի 278 մլն 452 հազ. դրամ:

Հավելենք նաեւ, որ հիմք ընդունելով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները՝ նախագծով ծրագրվել են 10 մլրդ 125 մլն 186 հազ. դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ:

Այդ դրամաշնորհը տրամադրվելու է Արեւելյան Եվրոպայի էներգախնայողության եւ բնապահպանական գործընկերության աջակցությամբ՝ իրականացնելու «Երեւանի 10 էներգաարդյունավետության» ծրագիրը: Քաղաքի բյուջեից կարելի է մաղել բոլոր հնարավոր ոչ պետքական ծախսերը եւ ուշադրություն դարձնել ավելի առաջնային խնդիրների:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ռուսաստանի Դաշնությունում մարդու իրավունքների հանձնակատար Տատյանա Մոսկալկովայի «Սրտից սիրտ» ակցիայի շրջանակներում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների համար հավաքագրված մարդասիրական օգնությունը Մոսկվայից ուղարկվել է Հայաստան:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ «ՏԱՍՍ»-ը հաղորդում է, որ աջակցությունը հավաքվել է՝ Ռուսաստանի հայերի միության կողմից օմբուդսմենին ուղղված դիմումի համաձայն, «Մոլորակ», «Վերածնունդ եւ հույս» հիմնադրամների եւ Ժողովրդական ճակատի աջակցությամբ:

«Մարդասիրական օգնությունն այն մարդկանց համար է, որոնք հայտնվել են կյանքի դժվարին իրավիճակում՝ Լեռնային Ղարաբաղից գալով Գյումրի, Երեւան: Ներառված են անկողնային պարագաներ, ներքնակներ, հիգիենայի պարագաներ երեխաների համար, որոշակի կենցաղային տեխնիկա, պահածոյացված շոգեխաշած միս, բացվող մահճակալներ: Կարծում եմ՝ այս ամենն օգտակար կլինի», - ասել է Մոսկալկովան:

Բացի այդ, նա հայտնել է իր պատրաստակամությունը՝ օգնելու ամանորյա միջոցառումներ կազմակերպել Լեռնային Ղարաբաղից երեխաների համար, եթե նրանք գնան Ռուսաստան:

«Որովհետեւ մարդու իրավունքները եւ գթասրտության առաքելությունն անքակտելիորեն կապված հասկացություններ են», - հավելել է Մոսկալկովան:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» Գ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՃԱՆԱՉՎԵԼ Է ՏԱՐՎԱ ԲԱՆԿ

Financial Times Group-ի The Banker միջազգային ֆինանսական առաջատար պարբերականը «Արդշինբանկ»-ը ճանաչել է 2023 թ. «Տարվա բանկը» Հայաստանում: Ֆինանսական հաստատությունները գնահատվել են կատարողականի բազմաթիվ չափանիշներով՝ ներառյալ ցուցանիշների աճը, շահութաբերությունը, գործառնական արդյունավետությունը, ակտիվների որակը, իրացվելիությունը, հուսալիությունը եւ այլն:

The Banker-ի խմբագիր Ջոյ Մաքնայթի շնորհավորական ուղերձում մասնավորապես ասվում է. «Շնորհավորում եմ «Արդշինբանկ»-ին Հայաստանում «Տարվա բանկ» մրցանակը ստանալու համար: Թվայնացման եւ կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու՝ «Արդշինբանկ»-ի նպատակաուղղվածությունը այն առավել ընդգծված է դարձրել իր մրցակիցների նկատմամբ: Օրինակ՝ բանկը վարկավորման գործընթացի արդյունավետությունը բարելավելու համար հաջողությամբ ներդրել է վարկային ռիսկի գնահատման՝ արհեստական ինտելեկտի վրա հիմնված համակարգ»:

Անդրադառնալով մրցանակի ստացմանը՝ «Արդշինբանկ»-ի վարչության նախագահ Արտակ Անանյանը նախ շնորհակալություն է հայտնել The Banker հեղինակավոր ամսագրին բանկի գործունեության բարձր գնահատականի համար. «The Banker ամսագիրը չորրորդ անգամ ճանաչում է «Արդշինբանկ»-ի առաջատարությունը հայաստանյան ֆինանսական շուկայում: Ես մեր ձեռքբերումները վերագրում եմ լավ մշակված բիզնես մոդելին, որը հիմնված է ոչ միայն կապիտալի եւ ռիսկերի արդյունավետ կառավարման քաղաքականության, ծախսերի վերահսկման եւ ֆինանսական կատարողականի, այլեւ ակտիվ թվայնացման, ինչպես նաեւ հաճախորդների անընդհատ փոփոխվող կարիքներին արագ արձագանքելու պատրաստակամության վրա: Մենք ձգտում ենք նրանց տրամադրել նորարարական ֆինանսական լուծումներ եւ կառուցել վստահելի հարաբերություններ»:

Նշենք, որ այս պատվավոր մրցանակը «Արդշինբանկ»-ի այս տարի նվաճած արդեն 6-րդ մրցանակն է:

Հիշեցնենք, որ 2023 թ. «Արդշինբանկ»-ը ճանաչվել է «Լավագույն բանկ», «Լավագույն կորպորատիվ բանկ» եւ «Լավագույն ESG բանկ (լավագույնը սոցիալական, էկոլոգիական պատասխանատվության եւ կորպորատիվ կառավարման մեջ)» հեղինակավոր Euromoney ամսագրի կողմից: Միեւնույն ժամանակ, «Արդշինբանկ»-ի Private Banking-ը լավագույնն է ճանաչվել Հայաստանում՝ ըստ Global Banking & Finance Review ամսագրի, իսկ Asian Banking & Finance ամսագիրը «Արդշինբանկ»-ը ճանաչել է «Լավագույն մանրածախ բանկ Հայաստանում»:

The Banker ամսագիրը Financial Times Group-ի մաս է եւ հրատարակվում է 1926.-ից: Ամսագիրը տնտեսական եւ ֆինանսական վստահելի տեղեկատվություն է տրամադրում ֆինանսական աշխարհին՝ ներառյալ ավելի քան 5000 բանկերի, ինչն օգնում է համեմատել աշխարհի տարբեր բանկերի ֆինանսական հզորությունը եւ հուսալիությունը:

ՄԱՔՍԱԶԵՐԾՈՒՄ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՄԵՔԵՆԱՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ կառավարության որոշմամբ՝ ԵԱՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար Հայաստանի Հանրապետություն ժամանակավոր ներմուծված՝ ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքին դասվող թեթեւ մարդատար տրանսպորտային միջոցների ազատ շրջանառության համար ներմուծման դեպքում քաղաքացիները կարող են օգտվել պետական աջակցության ծրագրից:

Ովքե՞ր կարող են օգտվել աջակցությունից

ՊԵԿ-ից տեղեկացնում են, որ միասնական դրույքաչափով վճարվող մաքսատուրքերի եւ հարկերի մասնակի փոխհատուցում կտրվի ՀՀ կամ ԵԱՏՄ անդամ այլ երկրների այն քաղաքացիներին (շահառուներ), որոնք մինչեւ 2023 թվականի դեկտեմբերի 4-ը ներառյալ ժամանակավոր ներմուծման նպատակով երրորդ երկրներից ներմուծել են թեթեւ մարդատար տրանսպորտային միջոց եւ դեկտեմբերի 5-ից դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում դրանք կմաքսազերծեն Հայաստանում:

Որքա՞ն է փոխհատուցման չափը

Մինչեւ 5 տարի թողարկման տարեթիվ ունեցող ավտոմեքենաների մասով փոխհատուցվում է վճարման ենթակա գումարի 40%-ը, այսինքն՝ շահառուն վճարում է 60%-ը, իսկ պետությունը փոխհատուցում է մնացած 40%-ը: Հինգ տարուց ավելի թողարկման տարեթիվ ունեցող ավտոմեքենաների մասով փոխհատուցվում է վճարման ենթակա գումարի 70%-ը, այսինքն՝ շահառուն վճարում է 30%-ը, իսկ պետությունը փոխհատուցում է գումարի մնացած 70%-ը:

Ինչպե՞ս իրականացնել մաքսազերծումը

Մաքսային ձեւակերպումներն իրականացնելու համար, 2023 թվականի դեկտեմբերի 5-ից սկսած, շահառուները կարող են այցելել Գյումրի քաղաքում գտնվող Հյուսիսային մաքսատուն-վարչություն (հասցե՝ ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկի փողոց, 2/14):

Անհրաժեշտ է, որ շահառուն մաքսատուն ներկայանա անձամբ անձը հաստատող փաստաթղթով, ներկայացնի ժամանակավորապես ներմուծված տրանսպորտային միջոցը, վերջինիս տեխնիկական անձնագիրը, ժամանակավոր ներմուծման ժամանակ կազմված մաքսային մուտքի օրդերը եւ, առկայության դեպքում, տրանսպորտային միջոցին վերաբերելի այլ առկա փաստաթղթերը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԱՐՑԱԽ

ԵՐԲ ԱՎԱՐՏՎԵՑ ՆՈՐ ՏԱՐԻՆ

«Դեռ չեմ մտածել Ամանորին պատրաստվելու մասին, քանի որ շատ հարցեր ու խնդիրներ կան, ու տրամադրություն չկա Նոր Տարի նշելու: Երեւի այն մեզ համար սովորական մի օր կլինի»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է Արցախից բռնի տեղահանված Գայանե Ենգիբարյանը:

Գայանեն հիշում է, որ մինչեւ Արցախի կիսվելը մեծ ուրախությամբ էին դիմավորում Նոր տարին: Փորձում էին՝ ամեն տարի տարբերվող լինի թե՛ սեղանի առատությամբ, թե՛ տան ու տոնածառի զարդարանքով: Պատերազմից հետո՝ 2021թ., շատ համեստորեն դիմավորեցին. ասում է՝ ամբողջ քաղաքն այդ օրերին լուռ ու անզարդ էր:

«2020 թվականից հետո, երբ վերադարձանք Ստեփանակերտ, դեռ քաղաքը քարուքանդ վիճակում էր, ամենուր որոնողափրկարարական աշխատանքներից իմանում էինք, որ ինչ-որ մեկի աճյունը կամ մարմնի մասունքը համընկել է ծնողի, որդու ԴՆԹ-ի պատասխանի հետ: Այդ պայմաններում, անտեսելով հարեւանի կամ հարազատի վիշտը, ու ասել, որ ես Նոր տարի եմ նշում, թեկուզ միայն երեխաների համար, միեւնույնն է, ճիշտ չէր լինի: Այդ իսկ պատճառով այդ տարի ոչ միայն մենք, այլեւ բոլոր արցախցիները Նոր տարի չնշեցին: 2022թ., 2023թ. փորձում էինք ընդամենը երեխաներին ուրախացնել: Կարծում եմ՝ Նոր տարին մեզ համար ավարտվեց 2020 թվականին»,- ասում է մեր զրուցակիցը:

Մեր զրուցակիցը պատմում է, որ երեխաները դեռ լիիրավ չեն պատկերացնում իրավիճակը, եւ նրանց մոտ այն զգացողությունն է, որ սովորական այցելություն է Երեւան:

«Երեխաներս այն զգացողությունն ունեն, որ երբ ուզենք, գնալու ենք Արցախ՝ մեր տուն: Ամեն պապիկին դեռ սպասում են ու արդեն հասցրել են նամակ-ցանկություն գրել: Ցանկություններից մեկն էլ Արցախ վերադառնալն էր»,- ասում է տիկին Գայանեն:

Գայանեն այժմ իր 4-հոգանոց ընտանիքով բնակվում է քաղաք Երեւանում՝ մեկ սենյականոց բնակարանում: Պայմաններից չի բողոքում, ասում է՝ թեեւ Ստեփանակերտում ամեն մեկն ուներ իր առանձին անկյունը, բայց հիմա մի սենյակում ավելի ուրախ ու համերաշխ են:

ԻՐԱԴԱՐՁԱՅԻՆ

ՆԱԽԸՆՏՐՈՒՄ Է ⇨ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

85-ամյա Ջեյն Ֆոնդան նախընտրում է ավելի երիտասարդ սիրեկանների: «Օսկարի» դափնեկիրը հարցազրույցներից մեկում ասել է, որ եթե նորից ժամադրության գնա, ապա տղամարդը պետք է 20 տարեկանից ոչ մեծ լինի:

«Ես ամաչում եմ ասել սա, բայց եթե ես սիրեկան ունենայի, նա պետք է լիներ 20 տարեկան»,-Հիզեր Մաքմահանի «Բացարձակապես ոչ» փոդքաստում ասել է Ֆոնդան:

«Ինչո՞ւ հենց 20»,-հարցրել է Մաքմահանը, իսկ դերասանուհին պատասխանել է հումորով. «Որովհետեւ ինձ դուր չի գալիս ծեր մաշկը»:

Ֆոնդայի խոստովանությունը համացանցում հակասական արձագանքների է արժանացել: «Ջեյն Ֆոնդան կարող է դա ասել»,-նշել է օգտատերերից մեկը: «Ես սիրում եմ այս կնոջը. այնքան ազնիվ է եւ ծիծաղելի»,-գրել է մեկ ուրիշը:

Բայց ոչ բոլորն են գնահատել աստղի անկեղծությունը: «Քսա՞ն: Ես նրանից կրկնակի երտասարդ եմ, բայց կարծում եմ՝ 20-ը շատ փոքր է իմ տարիքի համար»: «Սա չպետք է լինի նորմալ»,- նշում են որոշ վրդովված օգտատերեր:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Քանյե Ուեսթն ու Բիանկա Սենսորին հերթական անգամ ուշադրության կենտրոնում են իրենց ծավալուն հանդերձանքով: Հայտնի զույգը, ինչպես երեւում է, հարաբերությունների կարճատեւ դադարից հետո տեղափոխվել է Դուբայ:

Դիզայներ Ամինա Մուադդիի հետ համատեղ pop-up խանութի բացման ժամանակ Բիանկան ներկայացել է երկար թեւերով շագանակագույն միկրո զգեստով՝ տեսքը լրացնելով հսկայական մորթյա գլխարկով եւ փափուկ խաղալիքով, որը սեղմել է կրծքին:

Քանյեն կրում էր ամբողջովին սեւ անսամբլ՝ կաշվե վերարկու եւ համապատասխան կոշիկներ:

Բիանկայի անկեղծ հանդերձանքը նրա վերջին աչքի ընկնող կերպարներից մեկն է, սակայն շոուն «գողացել է» նրա մորթե գլխարկն ու փափուկ խաղալիքները:

Բոլորովին վերջերս խոսվում էր այն մասին, որ ռեփերը խզել է հարաբերությունները Բիանկայի հետ Մելբուրն կատարած ուղեւորությունից հետո, որտեղ Սենսորին ժամանակ էր անցկացնում իր ընկերների եւ ընտանիքի հետ, իսկ Քանյեն իր դստեր՝Նորթի հետ Դուբայում էր:

«Բիանկան Դուբայ է ժամանել մի քանի օր առաջ»,-Us Weekly-ին ասել է աղբյուրը՝ հավելելով, որ Քանյեն ասել էր՝ եթե նա չգնար այնտեղ, իրենց հարաբերությունները կավարտվեին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՍՄԱՅՍՏԵՐՆԵՐԸ

ՖԻԴԵ-ի դասակարգման նոր աղյուսակում Հայաստանն, ընդհանուր առմամբ, ունի 7 ներկայացուցիչ:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ դեկտեմբեր ամսվա տղամարդկանց դասակարգման աղյուսակում Հայկ Մարտիրոսյանը 54-րդն է, Գաբրիել Սարգսյանը՝ 61-րդը, Սամվել Տեր-Սահակյանը՝ 97-րդը, Հրանտ Մելքումյանը 100-րդը:

Հայաստանի հավաքականի նախկին առաջատար Լեւոն Արոնյանը 25-րդն է:

Կանանց վարկանիշային աղյուսակում Էլինա Դանիելյանը զբաղեցնում է 56-րդ, Լիլիթ Մկրտչյանը՝ 75-րդ, եւ Աննա Սարգսյանը՝85-րդ տեղերը:

ԱՌԱՔԱՏԱՐԸ «ՓՅՈՒՆԻԿՆ» Է

Հայաստանի ֆուտբոլի առաջնության առաջատարն անփոփոխ է հերթական տուրից հետո:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ հայկական Պրեմիեր լիգայի 18-րդ տուրից հետո Հայաստանի առաջնության մրցաշարային աղյուսակի առաջատարը մնում է «Փյունիկ»-ը: Եղիշե Մելիքյանի գլխավորած թիմն ունի 46 միավոր:

10-ը միավորով հետ է «Նոա»-ն, որը մրցաշարային աղյուսակում երկրորդն է: Եվ եռյակը նույնքան՝ 36 միավորով, եզրափակում է «Արարատ-Արմենիա»-ն:

34 միավոր ունի «Ուրարտու»-ն: 30 միավորով 5-րդ տեղում «Ալաշկերտ»-ն է: Մրցաշարային աղյուսակի վերջնամասում հաջորդաբար գտնվում են «Արարատ»-ը, ԲԿՄԱ-ն, «Շիրակ»-ը, «Վեստ Արմենիա»-ն եւ «Վան»-ը:

ԲՌՆՑՔԱՄԱՐՏՆ ՈՒ ԵՐԵՎԱՆԸ

Երեւանի «Միկա» մարզահամալիրում ավարտին մոտեցող բռնցքամարտի ավագ տարիքի պատանիների աշխարհի առաջնությունում Հայաստանի ներկայացուցիչներն ապահովել են 10 մեդալ:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ քառորդ եզրափակիչների արդյունքներով աշխարհի պատանեկան առաջնության կիսաեզրափակիչ են դուրս եկել Հեղինե Պետրոսյանը (48 կգ), տղաների հավաքականից՝ Առնո Դարչինյանը (46 կգ), Վաղարշակ Քեյանը (48 կգ), Տիգրան Հովսեփյանը (50 կգ), Արեն Խառատյանը (52 կգ), Անդրանիկ Մարտիրոսյանը (60 կգ), Արգիշտի Հակոբյանը (66 կգ), Սամվել Սիրամարգյանը (70 կգ), Ալբերտ Հարությունյանը (75 կգ) եւ Տիգրան Խաչատրյանը (+80 կգ):

Նշենք՝ եզրափակիչները նախատեսված են դեկտեմբերի 3-ին եւ 4-ին:

● *Դեկտեմբերի 3-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Դոն Ժուան Ավիա Junior» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Գորիսում ինչպե՞ս կարող եմ ստանալ մարդատար եւ երթուղային տաքսիների ծառայություն իրականացնելու թույլտվություն:

Աշոտ Նավասարդյան (36 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Համայնքի տարածքում մարդատար եւ երթուղային տաքսիների ծառայության թույլտվության համար անհրաժեշտ է դիմել քաղաքապետարան՝ Առեւտրի եւ սպասարկման բաժին:

ՀՀ Սյունիքի մարզպետարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համապատասխան թույլտվությունը տրամադրվում է 2 աշխատանքային օրվա ընթացքում:

ԷՋԸ՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է տրվում մահվան վկայականը:

Սիլվա Բոյաջյան (59 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Մահվան վկայական ստանալու համար հարկավոր է դիմել ՀՀ ԱՆ ՔԿԱԳ (ԶԱԳՍ) տարածքային բաժին եւ ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝

1. մահվան վկայականը ստացողի անձնագիրը եւ պատճենը,
2. մահացածի անձնագիրը,
3. թաղամասային բժշկի կողմից տեղեկանք՝ մահվան մասին:

ՀՀ ԱՆ ՔԿԱԳ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՔԿԱԳ բաժնի աշխատակցի կողմից տրվում է դիմումի ձեւ, որը պետք է լրացվի վկայական ստացողի կողմից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ակտիվիստ Արթուր Չախոյանը սոցցանցի իր էջում գրում է. «Բարի լույս եւ լավ օր եմ ցանկանում բոլորին, բացի Խորիկից:

Տեսանյութը երեկոյան կհրապարակեմ»: Այս գրառմանը կից նա նաեւ լուսանկար է հրապարակել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 5 + 4 + 7
Կոտայքի լեռներ	- 2 - 5 + 4 + 5
Կոտայքի նախալեռներ	- 2 - 5 + 5 + 8
Գեղարքունիք	- 2 - 6 + 3 + 6
Լոռի	- 1 + 4 +11 + 14
Տավուշ	+ 1 + 6 +13 + 16
Արագածոտնի լեռներ	- 4 - 6 + 3 + 5
Արագածոտնի նախալեռներ	- 2 - 7 + 6 + 9

Արարատ	- 2 + 1 +10 + 13
Արմավիր	0 - 3 +10 + 12
Վայոց ձորի լեռներ	0 - 5 + 2 + 5
Վայոց ձորի նախալեռներ	- 2 + 7 +10 + 13
Սյունիքի հովիտներ	+ 4 + 8 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	- 2 + 3 +11 + 15
ԼՂՀ	+ 1 + 6 + 9 + 12
Երեւան	+ 6 + 8 + 10 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.12.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*